ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

2022Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ 4

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ 6

3.1. Բյուջեի ծախսերը ծրագրային դասակարգմամբ 8

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ 11

5. ԱՄՓՈՓՈՒՄ 14

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2022 թվականի առաջին եռամսյակում գործընկեր երկրներում արձանագրվող տնտեսական աճերը մարտ ամսից սկսել են դանդաղել՝ պայմանավորված ռուս-ուկրաինական հակամարտությամբ և դրա արդյունքում ՌԴ-ի նկատմամբ կիրառվող աննախադեպ պատժամիջոցների բացասական ազդեցություններով: Առավել ակնհայտ է եղել Ռուսաստանի տնտեսական աճի դանդաղումը. տնտեսական ակտիվությունը հունվարին աճել է 5.8%-ով, փետրվարին՝ 4.3%-ով, իսկ մարտին՝ 1.6%-ով[1]: Տարեսկզբից միջազգային շուկայում հումքային ապրանքների գների նախորդ տարվա աճի միտման պահպանմանը ավելացել են նաև ռուս-ուկրաինական հակամարտության ազդեցությունները, ինչի արդյունքում միջազգային շուկաներում գնաճի տեմպն ավելի է արագացել (էներգակիրների գները 2022 թվականի առաջին եռամսյակում աճել են միջին հաշվով 80.0%-ով, իսկ սննդի գները՝ 24.7%-ով[2]):

Ռուս-ուկրաինական հակամարտությունն իր ազդեցությունն է ունեցել նաև ՀՀ տնտեսական ակտիվության վրա, որի տեմպը, թեև փետրվարին արդեն իսկ դանդաղել էր հունվարի բարձր աճից հետո, մարտին ավելի է նվազել՝ կազմելով 6.7%, իսկ հունվար-մարտ ամիսներին տնտեսական ակտիվության աճը կազմել է 9.6%: Մարտ ամսին տնտեսական ակտիվության աճի դանդաղումը հիմնականում պայմանավորված է եղել արդյունաբերության ոլորտում առաջացած խնդիրներով՝ կապված ռուս-ուկրաինական հակամարտությամբ: Արդյունքում արդյունաբերության ոլորտում գրանցվել է 6.9% անկում, իսկ հունվար-մարտ ամիսներին աճը կազմել է 3.1%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 5.9 տոկոսային կետով: Վերջինս պայմանավորված է մարտ ամսին հանքարդյունաբերական արտադրանքի իրական ծավալների շուրջ 29.0% նվազմամբ, ինչը շուրջ 7.9 տոկոսային կետով նվազեցրել է ընդհանուր արդյունաբերության աճի տեմպը: Մշակող արդյունաբերության աճի տեմպը մարտին ևս դանդաղել է՝ կազմելով 3.6% նախորդ ամսվա 10.4%-ի դիմաց, իսկ հունվար-մարտ ամիսների աճը կազմել է 10.9%՝ հունվար-փետրվարի 16.7%-ի դիմաց:

Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքը նվազել է 0.8%-ով՝ հիմնականում պայմանավորված անասնաբուծության և բուսաբուծության նվազմամբ (նպաստումները՝ համապատասխանաբար՝ 2.3 և 2.2 տոկոսային կետեր): Շինարարության ճյուղում

[1] Աղբյուրը՝ ՌԴ տնտեսական զարգացման նախարարություն, https://economy.gov.ru/material/file/bffc6cc5eadc71d91c685e2fe5908112/29102021.pdf

[2] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, https://www.worldbank.org/en/research/commodity-markets

2022թ. առաջին եռամսյակում գրանցվել է 6.2% աճ՝ պայմանավորված հիմնականում կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճով (նպաստումը՝ 12.9 տոկոսային կետ): Մինչդեռ պետական բյուջեի և բնակչության միջոցներով իրականացված շինարարության ծավալների նվազումները հակազդել են ընդհանուր շինարարության աճին (նպաստումները՝ համապատասխանաբար 4.4 և 2.7 տոկոսային կետեր): Ընդ որում՝ պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորվող շինարարության նվազումը պայմանավորված է եղել միջազգային վարկերով ֆինանսավորվող շինարարության նվազմամբ:

2022թ. առաջին եռամսյակում ծառայություններն աճել են 22.2%-ով՝ հիմնականում պայմանավորված «տրանսպորտ» (նպաստումը՝ 5.3 տոկոսային կետ), «տեղեկատվություն և կապ» (նպաստումը՝ 4.5 տոկոսային կետ), «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» (նպաստումը՝ 4.1 տոկոսային կետ), ինչպես նաև «կացության և հանրային սննդի կազմակերպում» (նպաստումը՝ 3.0 տոկոսային կետ) ենթաճյուղերի աճով: Առևտրի աճը նույն ժամանակահատվածում կազմել է 7.6%՝ հիմնականում պայմանավորված մեծածախ առևտրի և ավտոմեքենաների առևտրի աճով (նպաստումները՝ համապատասխանաբար 5.0 և 2.0 տոկոսային կետեր): Առևտրի և ծառայությունների աճն ուղեկցվել է ներքին (մասնավորապես՝ մասնավոր սպառման) և արտաքին (մասնավորապես՝ ծառայությունների արտահանման) պահանջարկի աճով: Ծառայությունների և առևտրի աճերին էականորեն նպաստել է ռուս-ուկրաինական հակամարտության և ՌԴ նկատմամբ սանկցիաների հետևանքով ՀՀ ժամանող ռուսաստանցիների թվաքանակի աճը, ինչի մասին է վկայում նաև զբոսաշրջիկների այցելությունների շուրջ 2.9 անգամ աճը:

Արտաքին առևտրի ցուցանիշները նույնպես էականորեն աճել են առաջին եռամսյակում, թեև մարտին նկատվել է աճի կտրուկ դանդաղում՝ նույնպես պայմանավորված ռուս-ուկրաինական հակամարտությամբ: Հունվար-մարտ ամիսներին արտահանումն աճել է 26.9%-ով՝ հունվար-փետրվարի համեմատ դանդաղելով 13.9 տոկոսային կետով, իսկ ներմուծումը՝ 45.6%-ով՝ դանդաղելով 14.8 տոկոսային կետով:

2022 թվականի հունվար-մարտ ամիսներին պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 8.3%-ով՝ կազմելով 57,242 մարդ: Միևնույն ժամանակ վարձու աշխատողների թվաքանակն աճել է շուրջ 6.0%-ով՝ կազմելով 658,804 մարդ:

2022 թվականի առաջին եռամսյակում միջին ամսական անվանական աշխատավարձը նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 9.6%-ով՝ կազմելով 212,767 դրամ: Պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 4.1%-ով՝ կազմելով 173,717 դրամ, իսկ ոչ պետական հատվածում՝ 11.2%-ով՝ կազմելով 230,567 դրամ: Իրական աշխատավարձը՝ 7.0% միջին գնաճի պայմաններում, 2021 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 2.4%-ով:

2022 թվականի առաջին եռամսյակում, չնայած տարեսկզբի որոշակի դանդաղմանը, գնաճի բարձր տեմպերը պահպանվել են և 12-ամսյա գնաճը մարտին կազմել է 7.4%: Այդ պայմաններում ՀՀ ԿԲ-ն շարունակել է խստացնել դրամավարկային պայմանները՝ բարձրացնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ եռամսյակի ընթացքում ընդհանուր առմամբ 1.5 տոկոսային կետով:

Այսպիսով, կարող ենք նշել, որ ՀՀ տնտեսական ակտիվության, ինչպես նաև տնտեսության հիմնական ճյուղերի՝ հունվար ամսվա բարձր աճերը որոշակիորեն դանդաղել են փետրվարին, այնուհետև ավելի են նվազել մարտին՝ ռուս-ուկրաինական հակամարտության ազդեցությունների հետևանքով: Հակամարտության բացասական ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա հիմնականում դրսևորվել են արդյունաբերության համախառն թողարկման անկման և արտահանման ծավալների աճի տեմպի դանդաղման միջոցով: Միևնույն ժամանակ, Ռուսաստանից ժամանողների թվաքանակի կտրուկ աճը դրական ազդեցություն է ունեցել ծառայությունների և առևտրի աճերի վրա:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2022 թվականի առաջին եռամսյակում, չնայած տնտեսական ակտիվության տեմպերի դանդաղմանը, հարկերի հավաքագրման բարձր աճի տեմպերը պահպանվել են ամբողջ եռամսյակի ընթացքում: 2022 թվականի հունվար-մարտ ամիսների արդյունքներով ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 425.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 21.8%-ով:

Պետական բյուջեի հարկերը և տուրքերը կազմել են 400.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 20.3%-ով: Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի (աճը՝ 21.8%), պետական տուրքի (աճը՝ շուրջ 3.3 անգամ) և շահութահարկի (աճը՝ 55.7%) աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 7.6, 4.9 և 4.1 տոկոսային կետ:

Հարկային եկամուտները գերակատարվել են ինչպես բյուջեի պլանի, այնպես էլ ճշտված պլանի նկատմամբ: Գերակատարման չափը կազմում է շուրջ 5.1 մլրդ դրամ, կամ 1.3%: Հարկ է նշել, սակայն, որ առաջին եռամսյակի փաստացի հարկային եկամուտների կազմում ներառված է նաև Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում ստուգումների արդյունքում բացահայտված և պետական բյուջե վճարված 15 մլրդ դրամի չափով տուգանքը, որը ներառված չէ ճշտված պլանում: Դրա բացակայության դեպքում հարկային եկամուտները թերակատարված կլինեին:

Ինչպես նախորդ տարի, այս տարի նույնպես, առաջին եռամսյակի դրամաշնորհների գրեթե 80%-ը չի ստացվել, ինչի արդյունքում դրամաշնորհների գծով բյուջեի մուտքերը պլանավորված 6.2 մլրդ դրամի փոխարեն (ճշտված պլանով՝ 6.4 մլրդ դրամ) կազմել են 1.3 մլրդ դրամ: Դա խոսում է այն մասին, որ կառավարությունը չի կատարել դրանց ստացման համար անհրաժեշտ նախապայմանները (որոնք նախօրոք համաձայնեցվում են կառավարության հետ):

Այլ եկամուտների գծով նախատեսված պլանը, ինչպես նաև ճշտված պլանը գերակատարվել է: Փաստացի ցուցանիշը կազմել է 23.6 մլրդ դրամ՝ ճշտված պլանի նկատմամբ գերակատարվելով 35.9%-ով: Կատարողականի բարձր ցուցանիշը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների օգտագործումից ստացված տոկոսավճարների, ապրանքների մատակարարումից ու ծառայությունների

մատուցումից և իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի եռամսյակային ծրագրի գերազանցմամբ:

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ

	2021թ.	2022թ.			
	Առաջին եռամսյակի փաստացի	Առաջին եռամսյակի պլան	Առաջին եռամսյակի ճշտված պլան	Առաջին եռամսյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը եկամուտներ, այդ թվում՝	**349.3**	**413.2**	**419.3**	**425.5**	**101.5**
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	**332.9**	**395.4**	**395.5**	**400.6**	**101.3**
Պաշտոնական դրամաշնորհներ	1.2	6.2	6.4	1.3	20.6
Այլ եկամուտներ	15.2	11.7	17.4	23.6	135.9

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2022 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջեի ծախսերը կազմել են 396.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 2.0%-ով: Բյուջեի ընդհանուր ծախսերը բյուջեի պլանի համեմատ թերակատարվել են 17.3%-ով, իսկ ճշտված պլանի համեմատ՝ 18.4%-ով:

Նույն ժամանակահատվածում ընթացիկ ծախսերը կազմել են 362.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 1.8%-ով: Աճին զուգընթաց գրանցվել է ընթացիկ ծախսերի թերակատարում և՛ բյուջեի պլանի, և՛ ճշտված պլանի համեմատ՝ համապատասխանաբար 14.0 և 13.8 տոկոսով: Էական թերակատարումներ է արձանագրվել «ծառայությունների և ապրանքների ձեռքբերում», «դրամաշնորհներ», ինչպես նաև «սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ» հոդվածներով:

Դրամաշնորհների ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է ենթակառուցվածքների զարգացման նպատակով ՀՀ մարզերին տրամադրվող սուբվենցիաների, ինչպես նաև որոշ ոլորտներում իրականացվող միջոցառումներին տրամադրվող ընթացիկ դրամաշնորհների կատարողականով: Այսինքն՝ համայնքներում պետական բյուջեի հաշվին նախատեսված կապիտալ ծրագրերը ամբողջությամբ չեն իրականացվել, ինչի հետևանքով դրամաշնորհներն ամբողջ ծավալով չեն փոխանցվել:

«Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ» հոդվածով նախատեսվել էր ծախսերի աճ (նախորդ տարվա առաջին եռամսյակի 147.3 մլրդ դրամի փոխարեն՝ 154.9 մլրդ դրամ), սակայն այդ աճը տեղի չի ունեցել, և փաստացի սոցիալական ծախսերը նվազել են շուրջ 6.2 մլրդ դրամով: Ըստ բյուջեի հաշվետվության՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սոցիալական նպաստների գծով ծախսերի նվազումը բացատրվում է ռազմական դրությամբ պայմանավորված՝ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հաշվառված քաղաքացիներին 2021 թվականին դրամական աջակցության տրամադրմամբ: Սակայն, հաշվետվությունում չեն ներկայացվում բյուջեի պլանի և ճշտված պլանի համեմատ թերակատարման պատճառները:

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 34.6 մլրդ դրամ, որտեղ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսերը) կազմել են 37.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ

նվազելով 25.1%-ով, որը հիմնականում պայմանավորված է 2022 թվականի երեք ամիսներին արձանագրված էական թերակատարումներով:

2022 թվականի երեք ամիսներին կապիտալ ծախսերի ճշտված ծրագրի կատարողականը վատթարացել է՝ կազմելով 55.3%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 76.7%-ի դիմաց: Ե՛վ ներքին, և՛ արտաքին միջոցների հաշվին իրականացված կապիտալ ծախսերը թերակատարվել են, սակայն ավելի ցածր կատարողական է արձանագրվել արտաքին աջակցությամբ իրականացվող ծախսերի գծով, որոնց շրջանակներում օգտագործվել է երեք ամիսների ծրագրված միջոցների ընդամենը 26.4%-ը: Կատարողականի համեմատաբար ցածր ցուցանիշները ցույց են տալիս, որ կապիտալ ծրագրերի կառավարման խնդիրը շարունակում է մնալ արդիական:

Աղյուսակ 2. Պետական բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ

	2021թ.	2022թ.			
	Առաջին եռամսյակի փաստացի	Առաջին եռամսյակի պլան	Առաջին եռամսյակի ճշտված պլան	Առաջին եռամսյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը ծախսեր	**404.9**	**480.0**	**486.4**	**396.8**	**81.6**
Ընթացիկ ծախսեր	**355.8**	**421.2**	**420.2**	**362.2**	**86.2**
Աշխատանքի վարձատրություն	34.0	38.6	39.2	35.3	90.0
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	25.4	38.5	39.0	27.4	70.2
Տոկոսավճարներ	37.3	40.5	40.5	39.2	96.8
Սուբսիդիաներ	23.5	29.0	28.9	27.2	94.3
Դրամաշնորհներ	40.0	51.1	52.6	44.8	85.2
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	147.3	154.4	154.9	141.1	91.1
Այլ ծախսեր	48.3	69.0	65.2	47.3	72.5
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	**49.1**	**58.8**	**66.2**	**34.6**	**52.4**
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	**49.6**	**59.8**	**67.2**	**37.2**	**55.3**

Հիմնական միջոցներ	49.6	59.8	67.2	37.2	55.3
Շենքեր և շինություններ	47.7	48.3	53.2	32.1	60.3
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	1.8	10.3	12.3	4.8	39.3
Այլ հիմնական միջոցներ	0.2	1.2	1.7	0.3	17.6
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	**-0.6**	**(1.0)**	**(1.0)**	**(2.5)**	**253.1**

3.1. Բյուջեի ծախսերը ծրագրային դասակարգմամբ

ՀՀ պետական բյուջեով նախատեսված ծրագրերը իրականացվել են ոչ ամբողջությամբ: Այսպես, առաջին եռամսյակում պլանավորված ծրագրերի շրջանակներում նախատեսված 718 միջոցառումներից ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել է ընդամենը 586-ը կամ 81.6%-ը: Ծախսերի կատարողականի ընդհանուր շեղումը կազմել է 89.6 մլրդ դրամ, որը հիմնականում արձանագրվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների (24.8 մլրդ դրամ), պաշտպանության (14.2 մլրդ դրամ), աշխատանքի և սոցիալական հարցերի (14.2 մլրդ դրամ), կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (7 մլրդ դրամ) նախարարությունների և ՀՀ ոստիկանության (4.6 մլրդ դրամ) պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերում:

Էականորեն թերակատարվել են (շուրջ 50%-ով) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատասխանատվության տակ գտնվող կապիտալ ծրագրերի գծով ծախսերը: Մասնավորապես.

- Ոռոգման համակարգի առողջացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների ընդամենը 47.8%-ը:
- Ճանապարհային ցանցի բարելավման ծրագրին ուղղվել է 4.5 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 35.8%-ը: Այդ թվում՝
    - Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման ծրագրի՝ տարբեր դոնորների աջակցությամբ իրականացվող միջոցառումների

շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 17.6%-ը,
  - պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման միջոցառման շրջանակներում 2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում օգտագործվել է նախատեսված միջոցների 29%-ը:
- Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 34.1%-ը:
- Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի իրականացման համար օգտագործվել է շուրջ 472.1 դրամ՝ ապահովելով 64.1% կատարողական:
- Կոշտ թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 21.3 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 14%-ը:

Վերոհիշյալ թերակատարումների գծով բյուջեի հաշվետվությունում բերվում են մի շարք պատճառաբանություններ, այդ թվում՝ եղանակային վատ պայմաններ, գնման գործընթացի հետ կապված խնդիրներ, դոնորների հետ ընթացակարգային խնդիրներ և այլն: Սակայն ակնհայտ է, որ պետական կառավարման համակարգում արդեն շուրջ չորս տարի շարունակ բացակայում են տնտեսության համար առանցքային ծրագրերի արդյունավետ իրականացման կարողությունները: Արդյունքում, տնտեսության ներուժի տեսանկյունից կարևորագույն ծրագրերը չեն իրականացվում ժամանակին՝ վտանգելով ոչ միայն ընթացիկ, այլ նաև ապագա տնտեսական աճը և զարգացումը:

Միաժամանակ, թերակատարումներ են արձանագրվել նաև մյուս նախարարությունների պատասխանատվության ներքո գտնվող ծրագրերի գծով: Մասնավորապես, առողջապահության նախարարության պատասխանատվությամբ գտնվող ծրագրերի գծով ապահովվել է ծրագրված ցուցանիշի 87.4% կատարումը, արդարադատության նախարարության ծրագրերի գծով կատարողականը կազմել է 68.1%, էկոնոմիկայի նախարարության պատասխանատվությամբ ծրագրերի գծով՝ շուրջ 76.5% և այլն: Ստացվում է, որ հատկացված գումարի առկայության պայմաններում ծրագրերը չեն իրականացվում, ինչը խոսում է պետական մարմինների ոչ լիարժեք աշխատանքի մասին:

ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումները: 2022 թվականի երեք ամիսներին ՀՀ պետական բյուջեի ընթացիկ ծախսերի կազմում կորոնավիրուսի (COVID-19) սոցիալ-տնտեսական հետևանքների նվազեցման և վերացման

նպատակով իրականացված միջոցառումների գծով հատկացված միջոցների ծավալը կազմել է ընդամենը 3.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 7.2 մլրդ դրամի դիմաց:

Միաժամանակ, ՀՀ պետական բյուջեից Արցախի Հանրապետությանը տրամադրված միջպետական վարկի ծավալը կազմել է 38.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 30.0 մլրդ դրամի համեմատ: Արցախի քաղաքացիների սոցիալական աջակցությանն ուղղվող ծախսերի վերաբերյալ որևէ տեղեկատվություն բյուջեի հաշվետվությունում չի ներկայացվում:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Վերոհիշյալ զարգացումների արդյունքում ՀՀ պետական բյուջեն 2022թ. առաջին եռամսյակում եղել է հավելուրդային՝ պլանավորված պակասուրդայինի փոխարեն: 2022 թվականի առաջին եռամսյակում ձևավորվել է պետական բյուջեի 28.7 մլրդ դրամ հավելուրդ, մինչդեռ բյուջեով պլանավորվել էր ունենալ շուրջ 66.8, իսկ ճշտված պլանով՝ 67.1 մլրդ դրամ պակասուրդ: Հավելուրդի ձևավորումը մեծամասամբ պայմանավորված է ծախսերի թերակատարմամբ: Ստացվում է, որ կառավարությունը տնտեսությունից հավաքագրում է հարկերը, սակայն չի ծախսում՝ այդպիսով նվազեցնելով տնտեսական ակտիվությունը: Այսպիսի գործունեության արդյունքում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա գնահատվում է էական զսպող (-4.7%)՝ պայմանավորված եկամուտների (-2.6%) և ծախսերի (-2.1%) զսպող ազդեցություններով: Մինչդեռ ըստ 2022թ. պետական բյուջեի ուղերձի՝ 2022թ. նախատեսվում էր իրականացնել չեզոք հարկաբյուջետային քաղաքականություն[3]:

Հավելուրդի պայմաններում կառավարությունն ակտիվորեն ներգրավել է ներքին պարտք. ներքին զուտ փոխառու միջոցների (փոխառությունների և մարումների տարբերությունը) ծավալը կազմել է 73.2 մլրդ դրամ՝ պլանավորված 77.0 մլրդ դրամի դիմաց: Արտաքին զուտ փոխառու միջոցների գծով մուտքերը պլանավորվածից էականորեն ցածր են եղել՝ 31.8 մլրդ դրամի փոխարեն կազմելով 15.5 մլրդ դրամ: Այդ թվում, նպատակային վարկերի գծով մուտքերը կազմել են 6.3 մլրդ դրամ՝ պլանավորված 24.3 մլրդ դրամի փոխարեն, ինչը ևս մեկ անգամ մատնանշում է նպատակային ծրագրերի (կապիտալ ծրագրերի) թերակատարումը:

[3] ՀՀ կառավարության 2022 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր, էջ 77, https://www.minfin.am/hy/page/petakan_byuje_2022t_nakhagits_

Աղյուսակ 3. Պետական բյուջեի պակասուրդը և ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ

	2021թ.	2022թ.			
	Առաջին եռամսյակի փաստացի	Առաջին եռամսյակի պլան	Առաջին եռամսյակի ճշտված պլան	Առաջին եռամսյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Բյուջեի պակասուրդը (+) / հավելուրդը (-)	**55.6**	**66.8**	**67.1**	**-28.7**	**-42.7**
Պակասուրդի ֆինանսավորումը՝					
Ա.Ներքին աղբյուրներ-ընդամենը	-272.2	70.7	73.9	-6.4	-8.7
1. Փոխառու զուտ միջոցներ	18.5	77.0	77.0	73.2	95.1
2. Ֆինանսական զուտ ակտիվներ	-290.7	-6.2	-3.0	-79.6	2627.7
Բ. Արտաքին աղբյուրներ-ընդամենը	327.8	-4.0	-6.8	-22.2	326.5
1. Փոխառու զուտ միջոցներ	357.7	31.8	31.8	15.5	48.8
Այդ թվում՝ նպատակային վարկերի գծով	8.3	24.3	24.3	6.3	26.0
2.Ֆինանսական զուտ ակտիվներ	-29.9	-35.8	-38.6	-37.8	97.7

2022թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 9,356.6 մլն ԱՄՆ դոլար և 2021թ. վերջի համեմատ աճել է 130.9 մլն ԱՄՆ դոլարով կամ 1.4%-ով: Այդ թվում, կառավարության պարտքը կազմել է 8,883.0 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 115.1 մլն ԱՄՆ դոլարով (1.3%-ով), իսկ ԿԲ պարտքը՝ աճել է 15.9 մլն ԱՄՆ դոլարով (3.5%-ով): ՀՀ կառավարության պարտքի աճը պայմանավորված է ներքին պարտքով, որի աճը կազմել է 134 մլն ԱՄՆ դոլար, մինչդեռ արտաքին պարտքը նվազել է 19 մլն դոլարով:

Պարտքի աճին զուգահեռ, էականորեն աճել են նաև պետական պարտատոմսերի տոկոսադրույքները: Կարճաժամկետ տոկոսադրույքները նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ աճել են շուրջ 1.1 տոկոսային կետով՝ հասնելով 10.1%-ի, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը՝ 0.8 տոկոսային կետով՝ կազմելով 10.5%: Տոկոսադրույքների նման միտումների պայմաններում

ներքին պարտքի ագրեսիվ ավելացումը՝ արտաքին պարտքի նվազմանը զուգահեռ, հանգեցնելու է պարտքի սպասարկման ծախսերի էական աճին՝ լրացուցիչ բեռ դառնալով բյուջեի համար:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ թեև 2022թ. հունվարին գրանցվել են տնտեսական ակտիվության բարձր ցուցանիշներ, դրանք փետրվարից սկսել են դանդաղել, իսկ ռուս-ուկրաինական հակամարտության ազդեցությունների արդյունքում աճի տեմպն ավելի է դանդաղել: Իրավիճակն առավել բարդանում է գնաճի անընդհատ արագացող տեմպի պայմաններում, որին արձագանքելով՝ կենտրոնական բանկը բավական մեծ քայլերով պարբերաբար բարձրացնում է վերաֆինանսավորման տոկոսադրույքը:

Այս պայմաններում և՛ հարկաբյուջետային, և՛ դրամավարկային քաղաքականությունները 2022թ. առաջին եռամսյակում տնտեսության վրա ունեցել են զսպող ազդեցություն: Սակայն, եթե դրամավարկային քաղաքականության դիրքի խստացումը որոշ չափով արդարացված է՝ գնաճի տեմպը զսպելու նպատակով, ապա հարկաբյուջետային քաղաքականության զսպող լինելու հիմքում ընկած նպատակները տեսանելի չեն:

ՀՀ պետական բյուջեի կատարումը 2022թ. առաջին եռամսյակում չի համապատասխանել նախօրոք պլանավորվածին: Եկամուտները հավաքագրվել են ավելի շատ, քան պլանավորվել էին, սակայն նախատեսված ծախսերն իրականացվել են ոչ ամբողջությամբ: Արդյունքում ձևավորվել է 28.7 մլրդ դրամ հավելուրդ՝ բյուջեով պլանավորված 66.8 մլրդ դրամ պակասուրդի փոխարեն: Ստացվում է, որ բյուջեի կատարումը ընդհանուր առմամբ պլանից շեղվել է շուրջ 95.5 մլրդ դրամով:

Միևնույն ժամանակ, պահպանվում է նախատեսված ծախսերի կատարման անկարողության խնդիրը: Հատկապես արտաքին աջակցությամբ իրականացվող ծախսերի գծով արձանագրվել է էական թերակատարում՝ շուրջ 73.6% (այսինքն՝ կատարման ենթակա ծախսերից իրականացվել է ընդամենը 26.4%-ը): Թերի են իրականացվել այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են ոռոգման համակարգի առողջացման, ճանապարհային ցանցի բարելավման (այդ թվում՝ Հյուսիս-հարավ ծրագրի շրջանակներում), սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրերը և այլն: Վերջիններս միտված են մեծացնելու ՀՀ տնտեսության պոտենցիալը, իսկ դրանց թերակատարումը վտանգում է ոչ միայն ընթացիկ, այլ նաև ապագա տնտեսական աճը և տնտեսական զարգացումը:

Բացի այդ, ռուս-ուկրաինական հակամարտության բացասական ազդեցությունների (որոնք արդեն իսկ արտացոլվել են արդյունաբերության և

արտահանման ցուցանիշներում) մեղմման ուղղությամբ դեռևս որևէ էական ծրագիր չի իրականացվել և բյուջեի պլանում որևէ փոփոխություն չի կատարվել: Ստացվում է, որ կառավարությունը պատրաստվում է սպասել մինչև բացասական ազդեցություններն ամբողջությամբ տեղափոխվեն ՀՀ տնտեսություն, ինչից հետո միայն կներկայացնի գործողությունների որոշակի իրավիճակային պլան: Սակայն դա միանշանակ կլինի ուշացած, և չի հաջողվի չեզոքացնել տնտեսական իրավիճակի վատթարացումը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*